

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը
հայտարարում է մրցույթ՝ մարզպետարանի համակարգում ընդգրկված՝ հարյուր տոկոս
պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ
բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոնը
զբաղեցնելու համար**

«Արմավիրի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող «<Էջմիածին>>
բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը
զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն,
2. առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ բժշկական ոլորտի
ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի
առնվազն 3 տարվա ստաժ,
3. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի
իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն,
բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝
Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր),
4. կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,
5. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝
 - ա. ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,
 - բ. անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման
գործընթացների կազմակերպման
 - գ. աշխատանքների բաշխման,
 - դ. կարգապահական պատասխանատվության
 - ե. խրախուսանքի միջոցների կիրառման,
6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու
ունակություն,
7. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝
գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու
կարողություններ,

8. բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում
9. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
10. ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
11. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
12. առողջապահության կազմակերպչի որակավորում
13. չի լրացել թեկնածուի 65 տարին:
14. Մրցույթը կանցկացվի 2017 թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 11.00-ին:
15. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները << Արմավիրի մարզպետարան են ներկայացնում
 - 1) դիմում.
 - 2) մեկ լուսանկար 3 x 4 չափսի.
 - 3) քաղվածք՝ աշխատանքային գրքուկից.
 - 4) ինքնակենսագրություն.
 - 5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
 - 6) քաղաքացու ցանկությամբ՝ հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.
 - 7) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել).
 - 8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ), որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:
16. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9⁰⁰-12⁰⁰, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 25.09.2017թ.:

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի շենքում (քաղաք Արմավիր, Աբովյան 71): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ (քաղաք Արմավիր, Աբովյան 71, անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 0237 2 16 29):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթներին մասնակցելու համար ՀՀ քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: